

# 1892-1895 թթ. ԿԱՐՍԻ ՄԱՐԶԻՑ ԵՐԿԻՐ ԱՆՑԱԾ ՄԱՐՏԱԿԱՆ ԵՎ ԶԻՆԱՏԱՐ ԽՄԲԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԴԵՐԸ ԱՐԵՎԱՏԱՐԱՅԵՐԻ ԻՆՔՍԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Ռուսաստանին անցած Կարսի սանջակից, Չըլդրի սանջակի մեջ մասից և Բասենի սանջակի մի փոքր մասից ստեղծվեց վարչական մի միավոր՝ Կարսի մարզ անվանումով:

Ծնորհիվ իր աշխարհագրական նպաստավոր դիրքի՝ Կարսը և նրա հարակից շրջանները առանձնահատուկ նշանակություն են ստանում XIX դարի վերջին և XX դարի սկզբին ծավալված հայ ազատագրական գինյալ պայքարում: Կարսի մարզը ոչ միայն Երկիր մեկնող մարտական և գինատար խմբերի գլխավոր խարիսխներից մեկն էր հանդիսանում, այլև դառնում է Հ. Յ. Դաշնակցության այն կարևոր դարբնոցը, որտեղ իրենց մկրտությունն են ստացել հայ ազատագրական պայքարի շատ նշանավոր գործիչներ: Հայ ազատագրական պայքարում Կարսի մարզի յուրահատուկ դերի հստակ բնութագրումը տրված է Ռուբենի (Մինաս Տեր-Մինասյան) ստորև բերվող տողերում. «Կարսը իր շրջաններով նստած էր Երկիր տանող ճանապարհներուն վրայ: Անոր փեշերուն տակէն էր, որ կարելի էր գնալ Բագրեւանդ, Երզրումի շրջանները, Խնուս եւ Ախլաթ, Յարք եւ Ապահունիք, հեռաւոր Քաջքերունիք եւ Տնօրիք, Վարդո, Տարօն եւ լեռներու մէջ կորած Սասնոյ աշխարհը: Կարսը հիւսիսային եւ հարաւային Հայաստանի օղակն ու բանալին էր եւ իբրեւ կայան կը խարսխէր եւ ամէն ինչով կ'օժանդակէր բոլոր այն անհատներու, որոնք մէկ կողմէն միւս կողմը կ'անցնէին՝ ազատութիւնը կերտելու նպատակով»<sup>1</sup>:

Եթևս 1880 -ական թթ. Կարսի մարզից Երկիր էին անցել մի շարք խմբեր և անհատներ: Այդ խմբերից իր թվակազմով և հայ բնակչության շրջանում ունեցած ազդեցությամբ անախաղեա էր 1890 թ. Սարգս Կուկունյանի գլխավորած արշավախումբը: Բայց, Կարսի մարզում արևելահայ երիտասարդներից խմբեր կազմավորելու և Երկիր առաքելու գործն առավել կազմակերպված բնույթ ստացավ 1890-ական թթ., երբ գործի դեկավարությունը ստանձնեց նորակազմ «Հայ հեղափոխական Դաշնակցություն» կուսակցությունը:

1892 թ. Թիֆլիսում ժամդարմերիայի արթուր հսկողության տակ կայացած Հ. Յ. Դաշնակցության առաջին ընդհանուր ժողովը ազդարարում էր. «Հ. Յ. Դաշնակցութիւնը ապստամբութեան միջոցով իր նպատակին հասնելու համար կը կազմակերպէ յեղափոխական խմբեր, որոնք կառավարութեան դէմ անընդհատ եւ գորեղ կրու հետ կրիւ կը մղեն նաեւ այն ընդհանուր պայմաններուն դէմ, որոնցից նեղուած են միեւնոյն ժամանակ թէ հայ եւ թէ օտար տարրերը»<sup>2</sup>: Ժողովում ընդունած ծրագրում ՀՅԴ-ի առջև դրված խնդիրներ էին հռչակվում հետևյալ սկզբունքները՝ «1. Կազմապերապել մարտական խմբեր, պարապել անոնց հետ եւ գործով պատրաստել, 2. Ամէն միջոց գործադրել ժողովուրդը զինելու համար, 3. Կազմակերապել յեղափոխական կոմիտեներ եւ սերտ կապեր հաստատել անոնց հետ, 4. Ուսումնասիրել Երկիրն ու ժողովուրդը յեղափոխական տե-

<sup>1</sup> Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Ա. հատ., Երեւան, «Աղանա» իրատ., 1990, էջ 124-125:

<sup>2</sup> Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 1457, գ. 1, գ. 1, թ. 8, նա՞և Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, յաւելած «Հայրենիք» ամսագրի, Ա. հատ., կազմեց Ս. Վրացեան, Պոսթըն, 1934, էջ 101, նա՞և Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար (այսուհետև՝ Նիւթեր...), Խմբ. Հր. Տասնապետեանի, իրատ. Հ. Յ. Դաշնակցութեան, Բ. հատ., թ. տպագր., 1985, էջ 14-15:

սակետից...»<sup>1</sup>: Չնայած ընդհանուր ժողովը տեղի էր ունենում գաղտնիության պայման-ներում, այնուհանդերձ, նրա ընդունած որոշումներն ու ծրագիրը հայտնի են դաշնում ցարական ժամանակակիցների համար՝ Առաջազգական ժեպարտամենտի՝ 1892 թ. հոկտեմբերի 14-ի թիվ 5194 գրության մեջ, որն ուղղված էր ոստիկանական վարչությանը, կետ առ կետ ներկայացվում է ՀՅԴ ընդհանուր ժողովի ընդունած որոշումներն ու սկզբունքները<sup>2</sup>:

Մինչ դեռ Թիֆլիսում շարունակվում էին ընդհանուր ժողովի նիստերը, նրա նախաձեռնողներից ախալցխացի Տիգրան Օքոնյանը Ուսուլ Գևորգի, քոռ Եղոյի, ղոնաղանցի Մարտիկի հետ մի խումբ է կազմում և անցնում Օլթի՝ Երկիր (Արևմտյան Հայաստան) անցնելու նպատակով: Այստեղ նրան են միանում տեղացի մի քանի երիտասարդներ: Խումբը Երկու շաբաթ մնում է Օլթի շրջանում: Տեղական իշխանությունները բացահայտում են դրա գոյությունը: Տեսնելով, որ իր ներկայությունը Վտանգավոր է դարձել տեղի հայկական գյուղերի համար՝ խումբը փորձում է անցնել ռուս-թուրքական սահմանը, բայց անհաջողության է մատնվում: Տիգրան Օքոնյանը գրում է խումբը, զենքերն ի պահ է տալիս ճուրճութիս գյուղի հայ գյուղացիներին, իսկ ինքն անցնում է Երզրում<sup>3</sup>:

Ասրաբետի վկայության համաձայն 1892 թ. մի քանի ախալցխացի երիտասարդներ. «խմբեր կազմելով Արդահանի, Օլթի, Նարիմանի ճամապարհով իջել էին Երզրում: Բայց մի քանիսը բռնուել, բանտարկուել էին եւ ռուսական կառաւարութեան միջոցով ազատուել էին, եկել Կարս»<sup>4</sup>:

ՀՅԴ առաջին ընդհանուր ժողովից հետո՝ 1893 թ. սկզբին, Թիֆլիսից Կարս է անցնում Արաբոն (Առաքել, Ստեփանոս Միհրարյան)` Երկիր անցնելու նպատակով: Այդ մասին Ռուսական ուղղված 1893 թ. փետրվարի 11-ի նամակում ՀՅԴ հիմնադիր-անդամ Քրիստովոր Միքայելյանը գրում է. «Արաբօն Լեւոնի եւ մի քանի ընկերների հետ ուզում է Երկիր մտնել, գուցէ յաջողուի ուղարկել: Ես կատաղում եմ, որ մի կարգին ընկեր չունենք դրանց հետ գնալու համար, իմ կարծիքով հանգամանքները նպաստաւոր են եւ գործը շատ կարեւոր, եթէ փոքր ինչ ուշանան, գուցէ ես ինքս վճռեմ 2-3 ամսով գնալ դրանց հետ»<sup>5</sup>: Վերոհիշյալ տողերը ցույց են տալիս, որ ՀՅԴ բյուրոն շատ էր կարևորում Արաբոյի դերը Տարրում ՀՅԴ կոմիտեներ կազմակերպելու տեսանկյունից: 1893 թ. գարնանը Արաբոն 16 հոգանոց լավ զինված խմբով Կարսի մարզից անցնում է ռուս-թուրքական սահմանը՝ ուղղություն վերցնելով Խնուս-Մուշ: ճանապարհին՝ Ղոզլուի սարերի մեջ քողերի հետ կռվի ժամանակ սպանվում է Արաբոյի զինակից ալիզոնանցի Լևոնը: Արաբոն «իր հետ վերցնելով իր ընկերներն միայն ինքն ինք, քիւրտերու տարագով կը շարունակէ ճամբան դէպի Շուրան (Մուշ)»<sup>6</sup>, բայց Գյոլառաշի ձորում՝ Մուշի և Խնուսի միջև, դարձյալ բախվում է քողերի հետ: Կռվում սպանվում են Արաբոյի զինակիցներ Բուլղարը, Խնուսի Մելքոնը, մշեցի Ավոն և Մարտոն: Արաբոն և ախալցխացի Վարդանը մեծ քաջություն են դրսերում, բայց նրանց բոլոր ջանքերը՝ ճեղքելու թշնամու օղակն ու

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 1457, գ. 1, գ. 1, թ. 8, նա՞և Ղիւան թ. 3. Դաշնակցութեան, Ա. հատ., էջ 101, նա՞և Նիւթեր..., Բ. հատ., էջ 15:

<sup>2</sup> Տե՛ս ժամանակական վարչութեան գեկուցումները հայերի հեղափոխական շարժումների մասին, «Նորը», գրական, գիտական յեւ քաղաքական հանդես, գիրք 5-6-րդ, Յերեվան, 1925, էջ 427-428:

<sup>3</sup> Տե՛ս Արամայիս Ազնաւորեանի յուշերը, գրի առաւ Ե. Հայրապետեան, «Հայրենիք» ամսագիր, Բուտոն, յուլիս, 1937, թիւ 9, էջ 145-146:

<sup>4</sup> ՀԱԱ, ֆ. 1456, գ. 2, գ. 9, թ. 112:

<sup>5</sup> Քրիստովոր Միքայելյանի նամակները, խմբ. Հր. Տասնակետեանի, Պէյրութ, 1993, էջ 13:

<sup>6</sup> Ոութեն, նշվ. աշխ., Գ. հատ., Երեւան, 1990, էջ 59:

հասնելու հանդիպակաց Տավրոսի լեռները՝ իզուր են անցնում: Թեև Արաբոն գոհվում է այդ կովում, բայց ժողովուրդը երկար ժամանակ չէր հավատում, որ նա մեռած է<sup>1</sup>:

Արաբոյի խմբից հետո՝ 1893 թ. վերջին Կարսի ՀՅԴ կենտոնական կոմիտեն Երկիր է ուղարկում ՀՅԴ գործիչների երկրորդ խումբը, որի կազմում էին Ղարա-Մելիքը (Բարսեղ Տեր-Գրիգորյան), Քեռին (Արշակ Գավաֆյան), ղարաբաղցի Արշակը, Զալլադը (Երվանդ Բաբերյան): Նրանք բարեհաջող հասնում են Կարին (Երզրում) և հաստատվում այնտեղ<sup>2</sup>:

1893 թ. Կարսում Անդրանիկ Օզանյանի գտնվելու և այնուհետև Երկիր անցնելու մասին տեղեկությունների ենք հանդիպում Ա. Չելեայյանի<sup>3</sup> և ակադեմիկոս Յ. Սիմոնյանի<sup>4</sup> աշխատություններում, իսկ Հնչակյան Սիրվարդի «Մեծն Մուրատ» գրքում Սասոն առաջին ապստամբության օրերին (1894 թ.) այստեղ կայացած մի ժողովի մասնակիցների թվում նշվում է նաև Անդրանիկի անունը<sup>5</sup>: Կարծում ենք վերոհիշյալ տեղեկությունը չի չի համապատասխանում իրականությանը, քանի որ այն հաստատող որևէ սկզբնաղբյուր չկա: Առավել ևս, որ Անդրանիկն իր հուշերում գրում է, որ առաջին անգամ Երկիր է մտել 1895 թ.<sup>6</sup>:

Մինչ Թիֆլիսում ձևավորվում էր Յ. Յաշնակցությունը, իսկ Կարսի մարզում ստեղծվում էին առաջին հեղափոխական կառույցներն ու կոմիտեները, 1891 թ. Սասուն անցած հնչակյան գործիչ Միհրան Տամատյանը, ավելի ուշ նաև Յամբարձում Պոյաճյանը (Մեծն Մուրատ) Սասոն ժողովուրդին Օսմանյան կայսրության դեմ ընթացական էին դրդում՝ նպատակ ունենալով այդ կերպ Հայկական հարցի վրա իրավիրել Անգլիայի ուշադրությունը և Արևմտյան Հայաստանում գործադրել տալ Բեռլինի վեհաժողովի 61-րդ հիդվածով նախատեսված բարենրոդումները: 1891-1893 թթ. մի շարք բախումներ են տեղի ունենում սասունցիների և շրջակա քրդական աշխրեների միջև: 1894 թ. բոլոր կողմերից պաշարված Սասունը կռվի էր պատրաստվում թուրքական կամոնավոր գործերի հետ: Եթե մինչ այդ հնարավոր էր հնատիպ իրացաններով, սրերով ու դաշույններով դիմակայել քրդերի հարձակումներին, ապա այժմ կրիվը շարունակելու համար անհրաժեշտ էին ժամանակակից գենքեր, որոնք սասունցին չուներ: Հնչակյան կենտրոնը Սասոն ապստամբության դեկավարներին խոստացել էր անհրաժեշտ քանակությանը զինամթերք տրամադրել Կարսի մարզից: Խոստացված գենքերը ստանալու համար 1893 թ. վերջերին անձամբ Կովկաս է մեկնում Յամբարձում Պոյաճյանը: Յասնելով Թիֆլիս՝ նա դիմում է տեղի Հնչակյան կառույցին: «Հետեւեալ իրիկունը մենք ունեցանք ընդհանուր ժողով»<sup>7</sup>, - վերիշում է հնչակյան գործիչ, գրող Աստրապետը (Սարգսի Մուրայաճյան): ժողովին մասնակցում են Աստրապետը, Շիրվանզադեն (Ալեքսանդր Մովսիսյան), Ղազարոս Աղայանը, Սև Սանդրոն, Սամարցյանը, Խաչիկ Վարդանյանը, Երվանդ Մինասյանը, Յամբարձում Պոյաճյանը և ախալցխացի Լևոնը: Մուրադը ծգտում էր հնարավորինս շատ իրացան ծեռք բերել և այն հասցնել Սասուն: Ժողովում Մուրադը ներկայացնում է իր ծրագիրը: «Նա յայտարարեց, որ Մուշի կեդրոնական զօրանոցում 15.000 հատ այնա-

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս «Յեղափոխական ալպոն (ազատագրական պայքարի յուշանատեան)», խմբ. Ալօ, հատ. 6, Պէյրութ, 1965, էջ 62-64, տե՛ս նաև «Յեղափոխական ալպոն», հատ. 8, Թեհրան, 1970, էջ 336-339:

<sup>2</sup> Տե՛ս Վալադեան Վ., Քեռին, «Յայրենիք» ամսագիր, դեկտեմբեր, 1959, թիւ 12, էջ 53:

<sup>3</sup> Տե՛ս Չելեայյան Ա., Զորավար Անդրանիկ և հայ հեղափոխական շարժումը, Երևան, 1990, էջ 7-9:

<sup>4</sup> Տե՛ս Սիմոնյան Յ., Անդրանիկի ժամանակը, Երկու գրքով, Ա. գիրք, Երևան, 1996, էջ 72:

<sup>5</sup> Տե՛ս Սիրվարդ, Մեծն Մուրատ (Յամբարձում Պոյաճեան. կեանքն ու գործունէութիւնը), Փրաւիտենս, 1955, էջ 30:

<sup>6</sup> Տե՛ս Անդրանիկի յուշերը, Պէյրութ, «Աղդակ»-ի տպարան, 1935, էջ 16:

<sup>7</sup> ՀԱԱ, ֆ. 1456, գ. 2, գ. 7, թ. 47:

լի հրացան կայ՝ 5 միլիոն փամփուշտով, որը պահպանում են 120 զինուորներ, որոնք մեծամասամբ միշտ զօրանոցից բացակայ են, – իիշում է Աստրատը. – Մուրատի ծրագիրն էր՝ մի գիշեր սասունցիներով հանկարծակի հարձակութել զօրանոցի վրայ, զենքերը վերցնել եւ տանել Սասուն, որպեսզի եթե օսմանցիները իրենց պաշտեն, հնարաւորութիւն ունենան ամբողջ բնակչութեանը թւանքով զինել եւ դիմադրել օսմանեան զօրքերին: Պարագան շատ նպաստաւոր էր, ծրագիրը՝ նպատակահարմար եւ գործադրելի, բայց 150 կամ 100 զենք 200.000 փամփուշտով գտնելն անհնարին էր»<sup>1</sup>, - իր խոսքը եզրափակում է Աստրատը: Այնուհետև նա նշում է, որ Արդահանում կար 35 բրիտանական հրացան, Կարսում՝ 24, Ալեքսանդրապոլում՝ 32, իսկ Երևանում՝ 50: Բայց դրանք պատկանում էին Յ. Յաշնակցությանը: Ղ. Աղայանի խորհրդով Մուրադը դիմում է ՀՅԴ-ին, սակայն, ՀՅԴ ղեկավարներից Սիմոն Զավարյանը ՀՅԴ բյուրոյի անունից պահանջում է, որ Մուրադն ու իր զինակիցները հետագայում հաշվետվություն ներկայացնեն ՀՅԴ բյուրոյին իրենց գործունեության վերաբերյալ, որից, սակայն, Մուրադը հրաժարվում է<sup>2</sup>: Նույն պատասխանն է տալիս նաև Քրիստոնակությանը Միքայելյանը: Միաժամանակ նա ՀՅԴ տեղական կառույցներին հրահանգ է տալիս առանց ՀՅԴ բյուրոյի ինացության ոչ ոքի զենք ու փամփուշտ չտալ<sup>3</sup>: ՀՅԴ Թիֆլիսի բյուրոյի նման դիրքորոշումը հասատվում է նաև «Դրոշակ»-ում հրատարակված Հրայր-Դժոխքի (Արմենակ Ղազարյան) նամակի ստորև բերվող տողերով. «Եւ դու՝ Յայ Յեղափոխական Դաշնակցութիւն, արդեօք խղճի խայք չես զգար, երբ Մուրատի երեսին փակեցիր քո դուռը, անօգնական թողիր նրան միայն այն պատճառով, որ նա պատկանում էր Հնչակեան խմբին»<sup>4</sup>: Ս. Զավարյանից և Ք. Միքայելյանից մերժում ստանալով՝ Մուրադը 1894 թ. սկզբին անցնում է Կարս՝ փորձելով անհրաժեշտ զինամթերքը ստանալ տեղի ՀՅԴ կենտրոնական կոմիտեից: Կարսի ՀՅԴ կենտրոնական կոմիտեն Մուրադին տալիս է 12 ոսկի և մի քանի հրացան<sup>5</sup>: Իր նախկին անգիծում կեցվածքից նահանջում է նաև Մուրադը: Նրան որոշակի զենք են տրամադրում նաև մի քանի դաշնակցականներ Բաքվից, Երևանից և Էջմիածնից: «150 մասուցերի եւ երկու միլիոն փամփուշտի փոխարէն 30-ի չափ զենք եւ 200.000 փամփուշտով ճանապարհ դրեցինք Մուրատին դեպի Երևան»<sup>6</sup>, - գրում է Աստրատը: Մուրադի բերած զենքերը շատ քիչ էին Սասունի կարիքները հոգալու համար: Ուստի նրա հանձնարարությամբ զենք ծեռք բերելու նպատակով 1894 թ. Կովկաս են անցնում Հրայր-Դժոխքը, Կառնենու Մկրտիչը, ղզլաղացի Պողոսը, գոմերցի Յովիկը՝ մի քանի մարտիկներով: Կարսում հանդիպելով տեղի Հնչակյան գործիչներին՝ նրանք զենք են պահանջում, բայց «Հնչակեան կուսակցութիւնը լուրջ պատրաստութիւններ չուներ եւ մանաւանդ զուրկ էր զինական կարելիութիւններէ»<sup>7</sup>: ՀՅԴ Կարսի գործիչներ Զալլադի, Տուրբախի (Յարություն Կիրակոսյան-Այվազյան), Թևանենց Ալեքի շնորհիվ խնդրին իրազեկ է դաշնում Կարսի ՀՅԴ կենտրոնական կոմիտեն, որն այս անգամ ևս պատրաստականություն է հայտ-

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 1456, գ. 2, գ. 7, թ. 48:

<sup>2</sup> Տե՛ս «Դրոշակ», յաւելլած, յուլիս, 1895, թիւ 9:

<sup>3</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1456, գ. 2, գ. 7, թ. 49, նաև նույն տեղում, գ. 2, գ. 9, թ. 122:

<sup>4</sup> «Դրոշակ», յաւելլած, յուլիս, 1895, թիւ 9:

<sup>5</sup> Տե՛ս Դիւան Յ. Յ. Դաշնակցութեան, Ա. հաս., էջ 180, տե՛ս նաև Փափազեան Վ., ին յուշերը, Ա. հատ., Պոսթըն, 1950, էջ 33, տե՛ս նաև Ռոստոմ (մահուան վարսունամեակին առթիւ), խմբ. Յ. Տ. Տասնապետեանի, Պեյրութ, 1979, էջ 100, տե՛ս նաև Ռոստոմ, Նամականի (մահուան ութսունամեակին առթիւ), խմբ. Յ. Տ. Տասնապետեանի, Պեյրութ, 1999, էջ 31:

<sup>6</sup> ՀԱԱ, ֆ. 1456, գ. 2, գ. 7, թ. 49:

<sup>7</sup> Սասունի Կ., Հրայրի դերը հայ ազատագրական շարժման մեջ (ակնարկ մը անոր յեղափոխական նկարագրին վրայ), տպարան «Ատլաս», Պեյրութ, 1964, էջ 17:

նում գենք և զինամբերը տրամադրել: 1894 թ. ՀՅԴ տրամադրած գենքերով Երկիր է անցնում ղզլաղացի Պողոսի 26 հոգանոց խումբը, որն ապահով հասնում է Սասուն<sup>1</sup>:

Կարսի մարզի տարածքից Սասուն գենք փոխադրող հաջորդ խումբը բաղկացած էր արևելահայ և արևմտահայ 17 երիտասարդներից, որոնց մեջ էր նաև դեռևս պատաճի շենիկցի Չոլոն: Խումբը 1894 թ. հունիսի կեսերին բարեհաջող անցնում է ռուս-թուրքական սահմանը, բայց Ղարաքիլիսա գյուղի մոտ հանդիպում է թուրքական զորքի: Չդիմանալով թշնամու արձակած կրակին՝ խմբի մի մասը հետ է վերադառնում ռուսական տարածք, իսկ մեծ մասը շարունակում է ճանապարհը: Չորքը սկսում է հետապնդել նրանց: Տեսնելով, որ թշնամին մոտենում է, հայ մարտիկները դիմադարձում են կրակը և փախուստի մատնում նրան: Թշնամին օգնություն է խնդրում Ղարաքիլիսայի զորամասի հրամանատարից: Վերջինս անմիջապես շտապում է օգնության<sup>2</sup>: Չորս ժամ տևած կռվից հետո խումբը, օգտվելով վրա հասած մթությունից, խուսափում է հետագա կռվից և շարունակելով ճամբան՝ ապահով հասնում է Սասուն: Խմբի անդամներից թշնամու ձեռքն են ընկնում միայն Առաքելն ու Մկրոն: Նրանցից ծեծի և չարչարանքի միջոցով փորձում են ինանալ խմբի նպատակակետն ու երթուղին, բայց ապարդյուն<sup>3</sup>:

1894 թ. անռանը Կարսից զինատար խմբով Սասուն է անցնում նաև շենիկցի Ստեփան՝ իշխան Գրգորի (Գրիգոր Սոսեյան) հորեղբոր որդին: Ապահով հասնելով Սասուն՝ նա երկու շաբաթ անց դարձյալ վերադառնում է Կարս ու գենք ուզում: Այդ հանգամանքը կասկած է հարուցում Կարսի ՀՅԴ «Զրաբերդ» կենտրոնական կոմիտեի մոտ, ուստի այս անգամ նրան գենք չեն տալիս<sup>4</sup>: Շուտով հասնում է Սասունի ապստամբության վախճանի, ժողովորի կոտորածի և Մուրադի ու Գևորգ Չավուշի (Գևորգ Աղանյան-Ղազարյան) ձերբակալման լուրը:

Հրայրը և Կառնենու Մկրտիչը, որոնք Կարսում մտնում են ՀՅԴ շարքերը, Սասուն չեն վերադառնում: Նրանք անցնում են Ռումինիա՝ տեղի հայ զաղություն հեղափոխական կազմակերպություն ստեղծելու համար<sup>5</sup>: Ռումինիայի Սուլիմա քաղաքում Հրայրը տեղի հայ երիտասարդներից հավաքագրում է 50 (որոշ տվյալներով՝ 60-70) հոգանոց մի խումբ, որի կազմում էր նաև շապին-գարահիսարցի Անդրանիկ Օզանյանը: Այդ խմբով Հրայրն անցնում է Կարս, որտեղ նրան է միանում նաև Բաթումից այստեղ անցած բարերդի Արշակ Ներսիսյանը (ապագա Սեպուհը): 1894 թ. Կարսում էր հաստավել նաև ախլաթցի Սերոր Վարդանյանը (Աղբյուր Սերոր), որը Սուլիմայում 1893 թ. սկսված խոլերիայից փրկվելու համար նախ անցել էր Կարին, ուր մտել էր ՀՅԴ շարքերը, այնուհետև անցել Կարս, ուր «մարտական խումբէր կը կազմէր եւ զանոնք կը վարժեցնէր»<sup>6</sup>: Այսպիսով, 1895 թ. Կարսում կուտակվում են զգալի թվով ռազմական ուժեր, որոնք պատրաստվում էին անցնել Երկիր:

Այս մասին Քրիստափոր Միքայելյանը Ռոստոմին ուղղված 1895 թ. փետրվարի 25-ի թվակիր նամակում գրում է. «Տաճկաստան գնալ ցանկացողների թիւը օր ըստ օրէ շատանում է, չխօսելով օտարների վրայ՝ միմիայն մեր ճանաչած տաճկահպատակ մշակ-

<sup>1</sup> Տե՛ս Ռուբեն, նշվ. աշխ., Ա. հատ., էջ 117-118:

<sup>2</sup> Տե՛ս «Դրոշակ», օգոստոս, 1894, թիւ 10, տե՛ս նաև Դիւան Հ. Յ. Ղաշնակցութեան, Ա. հատ., էջ 149:

<sup>3</sup> Տե՛ս Նորեան Ա., Դրագմեր Հ. Յ. Ղաշնակցութեան գործունեութիւնից, Ա. տասնամեակ, Բուստոն, 1917, էջ 106, տե՛ս նաև «Յեղափոխական ալպոն», հատ. 6, Պէյրութ, 1965, էջ 125-126:

<sup>4</sup> Տե՛ս Ռուբեն, նշվ. աշխ., Ա. հատ., էջ 132:

<sup>5</sup> Տե՛ս Սասունի Կ., Հրայրի դերը հայ ազատագրական շարժման մեջ, էջ 18:

<sup>6</sup> Չիլինկիրեան Ե., Փնջիկ բարոյական առանձներու եւ յիշատակ առաջնորդութենէս, Երուսաղէմ, 1928, էջ 85-86:

ներից մոտ 100 մարդ Երկիր պիտի գնայ: Դոցա պէտքերը (ճանապարհածախսով եւ գէնքով) մենք կարող ենք հոգալ, բայց անհրաժեշտ է, որ կազմակերպութեան եւ ոչ մի ասեղը չկորչէր այդպիսի մեծ ձեռնարկութիւններում, այդ պատճառաւ հարկաւոր է, որ այդ մարդկանց հետ լինեին ընկերներ, որոնց մենք հաւատում ենք կատարելապէս եւ որոնք կապ կ'ունենային թէ՝ կազմակերպութեան, եւ թէ՝ գնացողների հետ»: Նույն նամակում, անդրադառնալով Երկիր խմբեր ուղարկելու անհրաժեշտությանը, քր. Միքայելյանը գրում է. «Ներկայումս մէծ քանակութեամբ եւ ամէն տէսակի ուժերի Տաճկաստան գնալը շատ կարեւոր է եւ այն տէսակէտից, որ վերջին տեղեկութիւնների համաձայն Երկրում հայերի եւ մահմետականների մէջ յարաբերութիւնները րոպէտ առ րոպէտ լարւում են եւ ամէն րոպէտ մենք կարող ենք սպասել նորանոր ընդհարումների, այդպիսի միջոցին որքան կարելի է շատ մարդ եւ շատ գէնքի այնտեղ լինելը, խօսք չէ կարող լինել, որ առաջնակարգ պահանջ պիտի համարուի»<sup>1</sup>: Այսպիսով, ժողովրդին զինելն ու ինքնապաշտպանություն կազմակերպելը և Երկիր տարբեր շրջաններում ՀՅԴ կառույցների ստեղծումը այն առաջնահերթ խնդիրներն էին, որոնք ստիպում էին Հ. Յ. Դաշնակցությանը օր առաջ կազմավորել, զինել և Երկիր առաքել հնարավորինս շատ մարտական խմբեր:

1894-1895 թթ. Կարսում ակտիվ գործունեություն են ծավալում Ռոստոմը (Ստեփան Զորյան), Մարտիրոս Մարգարյանը (Սաֆո), Տուրբախը, Յամազասպ Նորհատյանը, Խաչիկ Բզմունին, Յրայր-Դժոխքը: 1895 թ. կարճ ժամանակով Ասրապատականից Կարս է գալիս նաև օրիորդ Սաթենիկ Մատինյանը (տիկին Արդության, Ծաղիկ): Վերջինիս նպատակն էր Թաթուլի (Արամ Արամյան) հետ անցնել Կարին, բայց Կարսի նահանգապետը թույլ չի տալիս: Նույն տարվա վերջին օրիորդ Մատինյանը անցնում է Թավրիզ<sup>2</sup>: 1895 թ. վերջին Կարս է անցնում նաև Սիմոն Զավարյանը (Սմբատ Օհանյան)<sup>3</sup>: Այս գործիչների շրջանում տիրապետող է դառնում այն գաղափարը, որ անհրաժեշտ է «ընտրել մի կէտ եւ այնտեղ կէդրոնացնել մեր ուժերը»<sup>4</sup>: Նույն գաղափարին հանդիպում ենք նաև «Դրոշակ»-ի խմբագրությանն ուղղված Ս. Զավարյանի 1895 թ. հոկտեմբերի նամակում. «Մեր (այստեղացիներիս) կարծիքն է՝ գործել, կռուել եւ կէդրոնացնել ուժերը մի տեղ»<sup>5</sup>: Այս գաղափարները գործնական հողի վրա դնելու համար Կարսի ՀՅԴ «Զրաբերդ» կենտրոնական կոմիտեի նախաձեռնությամբ Երկիր անցնելու նպատակով 1895 թ. կազմավորվում են մի քանի մարտական խմբեր:

Յատկապես ակտիվ էր Կարս անցած Յրայրը, որը նոր ուղիներ էր որոնում Երկրին օգնելու համար: Նա մշակում է Երկիր գենք փոխադրելու նոր ձև: Յրայրի ծրագիրը հետևյալն էր՝ Կարսի տեղական ուժերը մարզի սահմանամերձ շրջաններում նախապես պայմանավորված վայրերում պետք է ռազմանթերք և գենք բաքցնեին և հեռանային, իսկ գյուղացիների անվան տակ թուրքական Բասենից ռուս-թուրքական սահմանն անցած խմբերն այդ գենքերը գիշերով պետք է փոխադրեին Արևնտյան Յայաստանի հայկական գյուղերը<sup>6</sup>: Այս ծրագիրը սկզբնական շրջանում արդյունավետ էր: Դրա

<sup>1</sup> Քրիստոպիր Միքայէլեամի նամակները, Պէյրութ, 1993, էջ 16:

<sup>2</sup> Տե՛ս Հ. Յ. Դաշնակցութեան դիւնանէն Սեւ-քարեցի Սաքօի ինքնակենսագրութիւնը, «Դրոշակ», յունաւր, 1930, թիվ 1, տե՛ս նաև Սեւ-քարեցի Սաքօի ինքնակենսագրականը, Պէյրութ, 1994, էջ 38:

<sup>3</sup> Տե՛ս Դիւնան Հ. Յ. Դաշնակցութեան, Ա. հատ., էջ 215:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 183, նաև Ռոստոմ (մահուան վարսունամեակին առթիւ), խմբ. Հր. Տասնապետեանի, Պէյրութ, 1979, էջ 101:

<sup>5</sup> Սիմոն Զավարյան (մահուան եօթանասունամեակին առթիւ), խմբ. Հր. Տասնապետեանի, Բ. հատ., Պէյրութ, Յամազգայինի «Վահէ Ալեքեան» տպարան, 1992, էջ 38:

<sup>6</sup> Տե՛ս Ռուբեն, Շշկ. աշխ., Ա. հատ., էջ 129-130:

շնորհիվ 1895-1896 թթ. մեծ քանակությամբ զենք ու զինամթերք է փոխադրվում թուրքական Բասեն, որտեղից անհամենատ հեշտ էր այն Երկրի այլ վայրեր փոխադրելը: Այնուհետև Հրայրը ծրագրում է իր խմբով անցնել սահմանը, զինվել արդեն թուրքական Բասեն փոխադրված զենքով «եւ սկսել այս կամ այն գործը Երկրում կազմած այս կամ այն ծրագրով»<sup>1</sup>:

Հրայրի ծրագրի կարևոր կետերից մեկն էլ Բասենի շրջանի հայարնակ գյուղերում հեղափոխական կազմակերպությունների ստեղծումն էր: Բայց ինչ-ինչ պատճառներով նա ստիպված էր առժամանակ հրաժարվել իր ծրագրից: Բանն այն էր, որ Յնչակյան մի խումբ փորձել էր անցնել ռուս-թուրքական սահմանը, բայց սահմանագլխին բախտումներ էր ունեցել ռուս սահմանապահների հետ, ինչի արդյունքում խմբի անդամները ձերբակալվել էին<sup>2</sup>: Թեև նրանք մի քանի ամսից ազատ են արձակվում, բայց այդ դեպքից հետո սահմանի հսկողությունը ուժեղանում է: «Կարս հաւաքուած տղաքը կը փափա-քէին օր առաջ սահմաննեն ներս մտնել, բայց ստոյգ տեղեկութիւններէ կը պարզուէր, թէ սահմանի թրքական կողմի լեռները բռնուած են քիւրտերով, իսկ ռուսական կողմի լեռ-ները՝ թուշերով»<sup>3</sup>, - իհշում է Սեպուհը: Հրայրը ստիպված էր իր խումբը առժամանակ ցրել Կարսի և Ալեքսանդրապոլի հայկական գյուղերում: Սեպուհի վեցնյակը, որի կազմում էր նաև Անդրանիկ Օգանյանը, ուղարկվում է Արքիկ գյուղ, ուր խումբը պարապում է նշանաձգությամբ<sup>4</sup>:

Միևնույն ժամանակ Կարսից Երկիր անցնելու պատրաստություն է տեսնում ախլաթցի Սերոք Վարդանյանի խումբը, որը բաղկացած էր 27 մարտիկներից: Խմբի նպատակն էր՝ անցնել Ալիլաթ և «անմիջականօրէն մարտական գօրծունեութիւն ձեռնարկել՝ իբրև յեղափոխութեան առաջատար եւ ամենէն ազդու միջոց»<sup>5</sup>: Հրայրի և Սերոքի խըմբերի զենքն ու զինամթերքը Կարսի շրջանի սահմանամերձ գյուղեր փոխադրելու գործը հանձնարարվում է Արամայիս Ազնավորյանին, որը օգնականներ ունենալով ղոնաղանցի Մարտիկին, Ուսուլ Գրիգորին և Կոամ Նալչաջյանին, զենքը Ալեքսանդրապոլից Մարտիկի կառքով նախ փոխադրում է Կարսի շրջանի Բերնա, այնուհետև՝ Դորբոնդլու գյուղերը, որտեղից այն 20 ձիերով փոխադրում է Յոհանվերան, Ղոջաքիլիսա, այնուհետև՝ Արաքսի վրայով Բաշ գյուղ<sup>6</sup>: Այս ճանապարհով մինչև 1895 թ. հունիս ամիսը սահմանագլուխ է հասցում 100-ից ավելի հրացան՝ իրենց բոլոր պարագաներով և բավարար քանակությամբ փամփուշտ<sup>7</sup>:

Մինչ Հրայրը, Թաթուլն ու Սերոքը Կարսում Երկիր անցնելու պատրաստություն էին տեսնում, 1895 թ. հունվարին Բաքվից Կարս գալով՝ Սասունի թշվառ ժողովրդին օգնելու նպատակով շտապ մի փոքրիկ խմբով ռուս-թուրքական սահմանն անցնում և Սասուն է հասնում շապին-գարահիսարցի Աբրոն (Սկրտիչ Սահման), որն իր հետ տանում էր նաև որոշակի գումար: Այն հատկացրել էր Կարսի ՅՅԴ «Զրաբերդ» կենտրոնական կոմիտեն: Աբրոյի խումբը ՅՅԴ առաջին խումբն էր, որին հաջողվում է հասնել Սա-

<sup>1</sup> Դիւան թ. 3. Դաշնակցութեան, Ա. հատ., էջ 183, նաև Ռուսուն (մահուան վաթունամեակին առթիւ), խմբ. Յր. Տասնապետեանի, Պեյրութ, 1979, էջ 101:

<sup>2</sup> Տե՛ս Դիւան թ. 3. Դաշնակցութեան, Ա. հատ., էջ 183, 219, տե՛ս նաև Ռուսուն (մահուան վաթունամեակին առթիւ), Պեյրութ, 1979, էջ 99, տե՛ս նաև Ռուսուն, Նամականի, էջ 29-30:

<sup>3</sup> Վերածին Ս., Զօրաւար Սեպուհի յուշերը (մանկութիւն, պատանեկութիւն, Երիտասարդութիւն), հրատարակութիւն «Քրիստութիւր» նատենաշարի, Յալէպ, 1992, էջ 91:

<sup>4</sup> Տե՛ս Ներսիսյան Ա., Զորավար Սեպուհ, Երևան, 2006, էջ 30:

<sup>5</sup> Տասնապետեան Յր., Պատմութիւն թ. 3. Դաշնակցութեան, Ի հատ., Պեյրութ, 1997, էջ 128:

<sup>6</sup> Տե՛ս Ա. Ազնավորեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, հոկտեմբեր, 1937, թիւ 12, էջ 126-128:

<sup>7</sup> Տե՛ս Դիւան թ. 3. Դաշնակցութեան, Ա. հատ., էջ 180:

սուն: 1895 թ. ընթացքում Աբրոն զբաղվում է սասունցիների քանդված տների վերաշինության գործով, հավատ ու հույս էր ներշնչում հուսալքված բնակչությանը: Մուշում և Մշո դաշտի հայաբնակ գյուղերում ստեղծվում են ՀՅԴ առաջին կոմիտեները<sup>1</sup>: 1895 թ. կեսերին Տարոնում գործի ղեկավարությունը թողմելով Վարդան վարդապետին՝ Աբրոն մեկնում է Կովկաս՝ դրամ և գենք բերելու համար:

Աբրոյից հետո Կարսի գծով Երկիր անցնող հաջորդ խումբը լինում է ախլաքի Սերոք Վարդանյանի 33 (ըստ որոշ աղբյուրների՝ 27<sup>2</sup>) հոգուց բաղկացած խումբը: 1895 թ. օգոստոսին Սերոքը, որի օգնականն էր Թաթուլը (Աշոտ, Արամ Արամյան), Երկիր անցնելու նպատակով իր խմբով անցնում է Կարսի շրջանի սահմանամերձ Բաշ գյուղը: Սերոքի խմբին ճանապարհ դնելու համար Բաշ գյուղ են գալիս Ալեքսանդրապոլի, Կարսի և Սարիղամիշի ՀՅԴ կենտրոնական կոմիտեների ներկայացուցիչները, որոնց բարենաղթանքից հետո խումբը 1895 թ. օգոստոսի վերջին անցնում է Զլախանա լեռը, որտեղ, ինչպես վկայում է Ա. Ազնավուրյանը. «Խմբի անդամներին բաժանուեցին հրացանները, փամփուշտները եւ ճամբորդական պայուսակները: Ամէն մի զինուորի տրուեց նաեւ Երկու զոյգ գուլպայ, մի զոյգ տրեխս եւ Երկուական ոսկի՝ անակնկալների հանդիպելիս ծախսելու համար, իսկ մի խոշոր գումար էլ տրամադրեցին Սերովին եւ Արամին (Թաթուլ) խմբի ընդհանուր կարիքները հոգալու համար»<sup>3</sup>: Խումբը բարեհաջող անցնում է սահմանը: Նա ճանապարհին ընդհարում է ունենում թուրքական սահմանապահ մի ջոկատի հետ, բայց հետևելով Սերոքի հրահանգներին, հաջողությամբ առաջ է շարժվում և դուրս գալով կրակի գծից՝ անցնում է Արփաչայ գետը: Խումբը հասնում է թուրքական Բասեն, որտեղ էին գտնվում նաև Քեռին (Արշակ Գավաֆյան) և Զալլադը: Բասենում խումբը բաժանվում է Երկու մասի: Խմբի մի մասը (17 հոգի) Սերոք Վարդանյանի գլխավորությամբ պետք է գնար Խնուս, այնտեղից՝ Ախլաթ, իսկ խմբի մյուս մասը Քեռու գլխավորությամբ պետք է մնար Բասենի գյուղերում<sup>4</sup>: Բասենից Արամ Արամյանը Զալլադի հետ մեկնում են Կարին տեղի ՀՅԴ կենտրոնական կոմիտեին խմբի ժամանան մասին հայտնելու և «ժողովրդի տրամադրութիւնը, հայրենասիրութիւնը բարձրացնելու եւ դրամական հանգանակութիւն անելու համար»<sup>5</sup>:

Մեր համոզմամբ իրականությանը չի համապատասխանում պատմագիտության մեջ շրջանառվող այն տեսակետը, ըստ որի Թաթուլը Բասեն է անցել Հրայրի խմբի կազմում<sup>6</sup>: Այն չի հաստատում Ա. Ազնավուրյանը: Վերջինս Սերոքի 1895 թ. խմբի մասին իր հուշերում բազմից նշում է խմբապետի օգնական Արամի (Թաթուլ) մասին: Մինչ դեռ հակառակը պնդող որևէ սկզբնաղբյուր չկա:

<sup>1</sup> Տե՛ս «Դրոշակ», յուլիսի 15, 1896, թիւ 17, տե՛ս նաև Ռուբեն, նշվ. աշխ., Գ. հատ., էջ 126-128:

<sup>2</sup> Տե՛ս Օլիխեան Վ., Սերոք Աղբիր (Կեանքն ու գործունեութիւնը), «Հայրենիք» ամսագիր, սեպտեմբեր, 1926, թիւ 11, էջ 41, տե՛ս նաև Ալօ, Հրայր-Դժիկը, Պեյրութ, 1985, էջ 56, տե՛ս նաև Պողոսյան Ստ.,

Պողոսյան Կ., Ինձ բահ տվեք... (Գևորգ Չառլշ), Երևան, 1990, էջ 180, տե՛ս նաև Տասնապետեան Հր.,

Պատմութիւն Հ. Յ. Դաշնակցութեան, Ի հատ., էջ 124

<sup>3</sup> Ա. Ազնավուրեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, հոկտեմբեր, 1937, թիւ 12, էջ 129:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 131-132, տե՛ս նաև Վալաղեան Վ., Քեռին, «Հայրենիք» ամսագիր, դեկտեմբեր, 1959, թիւ 12, էջ 55, տե՛ս նաև Գևորգյան Հ., Եջեր հայոց ազատանարտի, Երևան, 2010, էջ 42:

<sup>5</sup> Ա. Ազնավուրեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, հոկտեմբեր, 1937, թիւ 12, էջ 132:

<sup>6</sup> Տե՛ս Պողոսյան Ստ., Պողոսյան Կ., Ինձ բահ տվեք... (Գևորգ Չառլշ), էջ 323, տե՛ս նաև Տասնապետեան Հր., Պատմութիւն Հ. Յ. Դաշնակցութեան, Ի հատ., էջ 124, տե՛ս նաև Ներսիսյան Ա., Ազգային-

ազատագրական պայքարը Տարոնում 1894-1908 թթ., Երևան, 1999, էջ 38, տե՛ս նաև Գևորգյան Հ.,

Ազատագրական պայքարի հերոսապատումից, Երևան, «Լուսակն» հրատ., 2006, էջ 18:

1895 թ. հոկտեմբերին խնուսի Գոգո Ավագի ուղեկցությամբ Սերոբի մարտախումբը թողնում է Խնուսի շրջանը և բարեհաջող հասնում Ախլաք: Այստեղ ստեղծելով հեղափոխական կազմակերպություն՝ Սերոբը կազմակերպում է նաև Բիթլիսի շրջանի հայ բնակչության ինքնապաշտամությունը<sup>1</sup>:

Սերոբի խմբի Երկիր մեկնելուց անմիջապես հետո՝ 1895 թ. օգոստոսին, պատրաստվում է Երկիր անցնել նաև Հրայրը: Նա ծրագրել էր իր մարտիկների մի մասին ուղարկել Խնուս, ոմանց՝ Մուշ և Սասուն, իսկ ինքը մի խմբով մնալ թուրքական Բասսենում<sup>2</sup>: Հրայրի հրահանգով Ալեքսանդրապոլի և Կարսի գյուղերում ցրված խմբերը հավաքվում են Կարսում, տարբեր ճանապարհներով հասնում Սարիղամիշ, ապա՝ Շահթեան և Շոխվերան գյուղերը: Այստեղ մնում են մի շաբաթ՝ մինչև Կարսի ՀՅԴ կենտրոնական կոմիտեից կարգադրություն է գալիս՝ կենտրոնանալ Խանտարայի շրջանի անտառում և սպասել Հրայրի գալուն<sup>3</sup>: Մի քանի օրից Խանտարայի անտառ են գալիս Հրայրը, Կարսի ՀՅԴ կենտրոնական կոմիտեի անդամներ Շամազասպ Նորհատյանը, Խաչիկ Բզնունին, Սև Կարոն և մի քանի այլ գործիչներ: Հրայրը խմբից առանձնացնում է 26 հոգու, ապա ընդհանուր խմբապետ է նշանակում ղզլաղացի Օհանին, իսկ տասնապետեր՝ Զրիկ գյուղացի Շամբարձումին և ղզլաղացի Շարությունին: Բացի 26 մարտիկներից, խմբի մեջ էին մտնում վերոհիշյալ Երկու տասնապետները, Երկու օգնական, խմբապետն ու վալադը<sup>4</sup>: Այսպիսով, խմբի անդամների ընդհանուր թիվը կազմում էր 32 հոգի: Խմբի յուրաքանչյուր անդամ ուներ 1 «բերդանկա» հրացան՝ 200 փամփուշտով, 1 շվեյցարական ատրճանակ՝ 100 փամփուշտով, փամփշտակալներ, ջրաման և այլն<sup>5</sup>:

Ձենքի և զինամթերքի բաժանումից հետո խմբին ողջերթի բարեմաղթանքներ են հղում Հ. Նորհատյանը, Խ. Բզնունին, Հրայր-Դժոխքը, որի ճառն ամենահուզիչն էր: Վերջում խմբին հանձնում են դրոշակ՝ ՀՅԴ զինանշանով, որի վրա ասեղնագործված էին «Մահ կամ ազատություն» բառերը: Խմբին իր խրատներն է տալիս վալադ Սաֆոն<sup>6</sup>: Սարիղամիշի Ղարաուրգան գյուղի մոտով բարեհաջող անցնելով ռուս-թուրքական սահմանը՝ խումբը մտնում է Բասենի Գոմածոր գյուղը: Բայց մինչև Գոմածոր հասնելը տասնապետները, որոնք չեն կարողանում շարունակել ճանապարհը, իրենց գենքն ու զինամթերքը հանձնելով խմբի մյուս անդամներին, իրենք մնում են ճանապարհին<sup>7</sup>: Շասնելով Բասեն՝ Հրայրը խմբի հրամանատարությունը հանձնում է ղզլաղացի Ասատուրին, իսկ ինքը մնում է Բասենում: Նա Բասենի շրջանում «ձեռնարկեց Բասենի կազմակերպութեան գործին, որպէսզի ռուսական սահմանէն սկսած Բասեն, Ալաշկերտ եւ Խնուսը կանոնաւորաբար կազմակերպուին եւ հաստատուն թիկունք մը դառնան Երկրի յեղափոխական շարժումներուն համար»<sup>8</sup>: Այս առթիվ հետաքրքիր է Կարսի ՀՅԴ «Զրաբերդ» կենտրոնական կոմիտեին ուղղված Հրայրի՝ 1895 թ. նոյեմբերի 28-ի նամակը,

<sup>1</sup> Սանրամասն տե՛ս Ռուբեն, նշվ. աշխ., Գ. հատ., էջ 149-151:

<sup>2</sup> Տե՛ս Ներսիսյան Ա., Ազգային-ազատագրական պայքարը Տարոնում 1894-1908 թթ., էջ 36, տե՛ս նաև նույնի Զորավար Սեպուհ, Երևան, 2006, էջ 32:

<sup>3</sup> Տե՛ս Վերածին Մ., Զօրաւար Սեպուհի յուշերը, էջ 94-95:

<sup>4</sup> Տե՛ս Միքայելեան Ա., Սեպուհ (իր կեանքը եւ յուշերը), «Հայրենիք» ամսագիր, յուլիս-օգոստոս, 1943, թիւ 4, էջ 83-84:

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 84, տե՛ս նաև Անդրանիկի յուշերը, էջ 16:

<sup>6</sup> Տե՛ս Սեպուհ (իր կեանքը եւ յուշերը), «Հայրենիք» ամսագիր, յուլիս-օգոստոս, 1943, թիւ 4, էջ 84-85:

<sup>7</sup> Տե՛ս Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, Ա. հատ., էջ 219, տե՛ս նաև Անդրանիկի յուշերը, էջ 17-18, տե՛ս նաև Սեպուհ (իր կեանքը եւ յուշերը), «Հայրենիք» ամսագիր, յուլիս-օգոստոս, 1943, թիւ 4, էջ 86:

<sup>8</sup> Լազեան Գ., Յեղափոխական դէմքեր (մտաւորականներ եւ հայդուկներ), Գահիրէ, 1945, էջ 314, տե՛ս նաև Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 18:

որում նա գրում է. «Վատահ եղէ՞ք, եթէ գտնեմ մի փոքր յարմարութիւն, անդադար պիտի գործեմ, մինչեւ վերջին շունչ»<sup>1</sup>: Սրանք միայն խոսքեր չեն, Յրայրն իսկապես ուներ գործելու մեծ եռանդ ու հմտություն, որոնք ներդնում էր սեփական ժողովրդի ազատության գործին:

Իսկ խումբը իր երթուղին շարունակում է Խշխու-Յարսընքար-Խոզլու-Յողուրթլու-Յահյա-Քաղցիկ գյուղերով: Խնուսի Քաղցիկ գյուղում խմբին հասնում է Աբրոյի նամակը, որում հրահանգ էր տրվում սպասել մինչև իր գալը: Խումբը ցրվում է Յարամիկ, Խալիշավուշ, Ղարա-Քյոփրու, Չավուրմե գյուղերում<sup>2</sup>: Այստեղ խումբը մնում է մոտ երկու ամիս: Այդ ընթացքում Սեպուհի ղեկավարությամբ կազմակերպելով թռուցիկ խումբ՝ սկսում են խնուսի գյուղերի երիտասարդության հետ զինավարժությամբ պարապել՝ միաժամանակ կազմակերպելով տեղի բնակչության ինքնապաշտպանությունը: Երկու ամիս անց՝ 1895 թ. աշնան վերջին խմբի խնուսից անդամները հաստատվում են խնուսի գյուղերում, իսկ սասունցի և մշեցի անդամները, որոնց մեջ էր նաև Անդրանիկ Օզանյանը, Սեպուհի ղեկավարությամբ անցնում են Մուշ և Սասուն<sup>3</sup>: Այստեղ նրանք լծվում են Տարոնի ժողովրդի զինման ու ինքնապաշտպանության կազմակերպման գործին: Բայց Սեպուհի ու Անդրանիկը 1896 թ. սկզբին դուրս են գալիս Երկրից, թեև 1-2 տարի անց նրանց կրկին տեսնում ենք Երկիր անցնելու ճանապարհին:

Մեր խորին համոզմանք իրականությանը չի համապատասխանում պատմագրության մեջ շրջանառվող այն տեսակետը, ըստ որի Անդրանիկը Երկիր է անցել 1895 թ. հուլիսին՝ առանձին խմբով<sup>4</sup>: Սեպուհի և Անդրանիկի հուշերը, ինչպես նաև այլ աղբյուրներ, հաստատում են, որ Անդրանիկը Երկիր է անցել 1895 թ. օգոստոսին Յրայրի, իսկ Բասենից՝ ղզլաղացի Ասատուրի խմբի կազմում:

Յրայրի խմբից անմիջապես հետո ոռւս-բուրքական սահմանն անցնում է ալվարինցի Սև Մելքոնի ղեկավարած հնչակյանների՝ 13 հոգուց բարկացած խումբը: Ի տարբերություն վերը հիշատակված առաջին խմբի՝ այն բարեհաջող անցնում է սահմանը և շարժվելով դեպի խնուս՝ այնտեղ հանդիպում է ղզլաղացի Ասատուրի խմբին: Հնչակյան այս խումբը 2-3 օր խնուսում մնալուց հետո «Ղարազորան-Բուրլանողի վրայով Սասուն կ'անցնին, բայց ճանապարհին, հաւանօրէն երբ կ'իմանան, որ դաշնակցականները գրաւած են Սասունը, կը վերադառնան դէպի Ալաշկերտ»<sup>5</sup>, - կարդում ենք Սեպուհի հուշերում:

1895 թ. օգոստոսին Կարսում խնուսցիներից կազմված հայդուկային խմբով ոռւս-թուրքական սահմանը հատում և խնուսում է հաստատվում նաև Տուրքախը: Խնուսում նրան է հանձնվում «Խնուսի եւ Պուլանուխի շրջաններում կազմակերպական, հայդուկային խմբերու կազմութեան եւ զինումի պատասխանատու գործը»<sup>6</sup>, որը նա կատարում է մեծ ձեռնհասությամբ և եռանդուն քայլերով:

<sup>1</sup> Վրացեան Ս., Արմենակ Ղազարեան (Յրայր, Դժոխք), «Յուշապատում Յ. Յ. Ղաշնակցութեան. (1890-1950)», խմբ. Ս. Վրացեան, Բուստոն, 1950, էջ 352:

<sup>2</sup> Տե՛ս Անդրանիկի յուշերը, էջ 18-21, տե՛ս նաև Սեպուհ (իր կեանքը եւ յուշերը), «Յայրենիք» ամսագիր, յուլիս-օգոստոս, 1943, թիւ 4, էջ 86-88:

<sup>3</sup> Մանրանասն տե՛ս Սեպուհ (իր կեանքը եւ յուշերը), «Յայրենիք» ամսագիր, սեպտեմբեր-հոկտեմբեր, 1943, թիւ 5, էջ 93-98:

<sup>4</sup> Տե՛ս Միմոնյան Յր., Անդրանիկի ժամանակը. Ա. գիրք, էջ 74-75, տե՛ս նաև Ղազարյան Յ., Յայ ժողովրդի ցեղասպանությունն Օսմանյան կայսրությունում 1890-1922 թթ., Ի հատ., Երևան, 2007, էջ 578:

<sup>5</sup> Սեպուհ (իր կեանքը եւ յուշերը), «Յայրենիք» ամսագիր, սեպտեմբեր-հոկտեմբեր, 1943, թիւ 5, էջ 94:

<sup>6</sup> «Յեղափոխական ալպոն», հատ. 5, Պէյրութ, 1964, էջ 315, նաև Ներսիսյան Ա., Ազգային-ազատագրական պայքարը Տարոնում 1894-1908 թթ., էջ 37:

1895 թ. Սասուն անցած գործիչների թվում Ռուբենը նշում է նաև Զալլադին, որն իր խումբը «ապահով կը հասցնէ Տարօն: Ինքը Խնուսի վրայով կը վերադառնայ Կարս»<sup>1</sup>: 1895 թ. ամռան վերջին Մուշ է անցնում նաև Կառնենու Սկրտիչը:

1895 թ. օգոստոս-սեպտեմբերին Սասունից Կովկաս է անցնում Աբրոն, որը 2-3 ամիս մնալով այստեղ՝ կազմավորում է հայդուկային խումբ և պատրաստվում 2-րդ անգամ անցնել ռուս-թուրքական սահմանը: Բայց նոր ջարդերի մասին Երկրից եկող լուրերը նրան ստիպում են խումբը թողնել ուրիշ ընկերների ղեկավարության և արդեն կազմավորված ՀՅԴ մեկ այլ խմբի հետ անցնել Սասուն: Աբրոյի խումբը, լավ զինված լինելով, Սասուն տանող ճանապարհին կարողանում է շատ տեղերում ժողովրդին պաշտպանել քրդերի հարձակումներից: 1895 թ. վերջին բարեհաջող հասնելով Սասուն և իր հետ բերելով բավականաչափ դրամ ու ռազմամթերք՝ Աբրոյ ձեռնամուխ է լինում Սասունում ՀՅԴ կոմիտեների կազմավորմանը<sup>2</sup>: Բայց, 1896 թ. մարտին, երբ նա Թովմասի հետ Սասունի Սեմալ գյուղից անցնում էին Գելիեգուզան, ճանապարհին սաստիկ ձնահյուսքի տակ են ընկնում և զոհվում: Միայն մեկ ամիս հետո նրանց դիակները Գևորգ Չավուշի և ուրուզգի Ջարությունի ջանքերով հանուն են ձյան տակից և թաղվուն քահանայի օրինությամբ<sup>3</sup>:

Անդրադառնալով 1895 թ. Երկիր անցած խմբերին՝ «Դրոշակ»-ի խմբագրությանն ուղղված 1895 թ. հոկտեմբերի թվակիր նամակում Ս. Զավարյանը գրում է. «Ճենց այս օրերը անցած են սահմանը մոտ 80 հոգի զինուած Թաթուլի, Դժոխքի, Ախլաթցի Սերովի, Խնուսից Աւագի առաջնորդութեամբ»: Միաժամանակ անդրադառնալով գենքի փոխադրման խնդրին՝ նա նշում է, որ. «100 հատ նոր առնուած գենքեր... վաղուանից ուղարկում ենք դեպի Կարմոյ կողմերը»<sup>4</sup>: Սակայն, գենքի այս քանակությունը Երկիր առաքելու գործին խանգարում են Կարսի նահանգում սկսված խստություններն ու ձերբակալությունները, որոնց առնչությամբ Կարսից գրած 1895 թ. նոյեմբերի 3-ի թվակիր նամակում Ս. Զավարյանը գրում է. «Արդէն երգորումի վալին դիմած է Կարսայ նահանգապետին՝ թոյլ չտալու կամաւորներին անցնելու (սահմանը – Կ. Յ.): Նա էլ պատասխանած է, որ այդպիսի բաներ չկան, բայց խստութիւնները սաստկացրել է»<sup>5</sup>: Այսուհետև Ս. Զավարյանը նշում է Լևոն Գյուլումյանի ձերբակալության մասին:

Երկիր անցած բոլոր խմբերը համիլյան ջարդերի օրերին անմիջապես անցնում են տեղի հայ բնակչության ինքնապաշտպանության կազմակերպման գործին: Նման գործունեություն են ծավալում նաև Բասենում հաստատված ՀՅԴ խմբերն ու գործիչները: 1895 թ. վերջին Բասենի շրջանում, հատկապես Դալի-բաբայում թեժ մարտեր են ընթանում հայկական ինքնապաշտպանական ուժերի և տեղի թուղթ-քրդական իրուսակների միջև, որոնց հանձնարարված էր կոտորել հայերին: Այդ կապակցությամբ Հրայրը Կարսի ՀՅԴ կենտրոնական կոմիտեին ուղղված նամակում գրում է. «օգնութիւն է հարկաւոր՝ գենք, փամփուշտ»: Նույն ժամանակ Թաթուլը հաղորդում է. «Այլեւս յետաձգելու ժամանակ չէ, ...պէտք է հենց կիմա դիմել գործի»<sup>6</sup>: Ստանալով այս նամակները՝ Կարսի ՀՅԴ կենտրոնական կոմիտեն որոշում է. «19 հրացանով եւ բաւականին քանակութեամբ

<sup>1</sup> Ռուբեն, նշվ. աշխ., Ա. հատ., էջ 133:

<sup>2</sup> Տե՛ս «Դրոշակ», յուլիսի 15, 1896, թիւ 17:

<sup>3</sup> Տե՛ս Յ. Յ. Դաշնակցութեան դիւանէն Գեղրգ Չավուշի ինքնակենսագրութիւնը, «Դրոշակ», սեպտեմբեր, 1929, թիւ 9, նաև Ամենուն տարեգիրքը, խմբ. Կ. Գեղրգեան, ԺԱ տարի, Պէյրութ, 1964, էջ 135-136:

<sup>4</sup> Սիմոն Զաւարեան, Բ. հատ., էջ 38:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 54:

<sup>6</sup> Դիւան Յ. Յ. Դաշնակցութեան, Ա. հատ., էջ 216, նաև Սիմոն Զաւարեան, Բ. հատ., էջ 57:

ատրճանակներով 30 հոգու անմիջապէս անցկացնել (սահմանը – Կ. Հ.)», որոնց նպատակն էր. «օգնութեան հասնել պաշարուած Դժոխքին, բռնել յարձակողական դիրք դէպի տերութիւնը (Օսմանյան կայսրությունը – Կ. Հ.), ինչքան ոյժերը կու տայ խոյս չտալ ոչ մի ընդհարումից, ժողովորի վերաբերմամբ բռնել պաշտպանողական դիրք, անպայման հպատակուել այն կողմերում գտնուող կոմիտեներին եւ Դաշնակցութեան ներկայացուցիչներին»<sup>1</sup>: ՀՅԴ այս նոր խմբին, չնայած սահմանագլխին թուրք սահմանապահների հետ ունեցած ընդհարումներին, հաջողվում է 1895 թ. նոյեմբերին անցնել սահմանն ու հասնել Բասեն<sup>2</sup>:

«Դրոշակ»-ի խմբագրությանը 1895 թ. նոյեմբերի վերջին ուղղված նամակում Ս. Զավարյանը, անդրադառնալով Բասենի շրջանում տեղի ունեցած ընդհարումներին, գրում է, որ շնորհիվ տեղի հեղափոխականների, շատ տեղերում ինքնապաշտպանական գործն այսպիսի լայն ծավալ է ստացել, որ «զինուորմերը (թուրք) ջանֆիրա յեղափոխականներից շատ սարսափած են», իսկ որոշ տեղերում «սարսափահար ջանֆիրաներից՝ շատ դէպքեր են եղել, երբ տաճիկները պաշտպանութիւն են խնդրել հայերից»<sup>3</sup>: Նույն նամակում, իհմք ընդունելով Կարսի ՀՅԴ «Զրաբերդ» կենտրոնական կամիտեին ուղղված Բասենի գործիչների նամակը, Ս. Զավարյանը գրում է. «Ամէն տեղից օգնութիւն են խնդրում... նրանց (արևմտահայերի – Կ. Հ.) յոյսերը միայն ռուսաստանցի հայերի վրայ է»: Ելելով դրանից՝ նա առաջարկում է. «Եթէ հաջողուեց մի 100-200 հոգի անցկացնել, նանաւանդ փորձուած զինուորներ, դա կ'ունենայ ահագին նշանակութիւն: Եթէ դրանք անցածների հետ միանան ու կերտոնանան մի տեղ՝ կարող են առաջ բերել երկրորդ փորձիկ Ձեյթուն, որը ահագին նշանակութիւն կ'ունենայ հարցի (հայկական – Հ. Կ.) լուծնան համար...»: Միաժամանակ նշվում է Կարսի շրջանում զենքի խիստ պակասի մասին. «Դրացանի հարցը ամէնակարեւոր հարցն է իհմա: Մենք ունինք պատրաստ 30 հատ եւ շուտով կը լինի մօտ 50 (հրացան – Կ. Հ.): Եթէ դրանք հասան սահմանը, այս-այն տէղ առնելիքների հետ բաւականին լաւ բան կ'լինի»<sup>4</sup>: Ս. Զավարյանի այս ծրագիրն իրագործել չի հաջողվում, քանի որ ցարական ժանդարմերիան սահմանամերձ շրջաններում սաստկացնում է խստությունները, նույնիսկ գյուղերում խուզարկություններ են կատարվում, որոնց ժամանակ լինում են նաև ձերբակալություններ: Նույն նամակում այդ մասին կարդում ենք. «Ամէն տեղ խստութիւններ են... Դաստատ աղբիւրից գիտենք, որ սեպտեմբերի վերջին ներքին գործերի նախարար Դուրնաւօն Շերեմետիեվին (Կովկասի կառավարչապետ – Կ. Հ.) ուղարկելով Պարսկաստանից եկած նամակները՝ առաջարկում է վերջինիս խիստ հետամուտ լինել հայ յեղափոխական շարժմանը...: Շերեմետիեվն էլ հրահանգ է տուած նահանգապետերին՝ խիստ լինել»: Անդրադառնալով այս խուզարկությունների թողած ազդեցությանը՝ Ս. Զավարյանը գրում է. «Մի կողմից գործը, միւս՝ սովեալները, իսկ ժողովարարութիւնը (դրամահավաքչությունը – Կ. Հ.) բաւականին թոյլ է գնում...»<sup>5</sup>:

Կարսի նահանգում և Ալեքսանդրապոլի գավառում հայ հեղափոխականների հանդեպ սկսված հալածանքները մի կողմից, իսկ աբդուլ-համիդյան ջարդերի հետևանքով արևմտահայ բնակչության տնտեսական քայլայումը մյուս կողմից արգելը են հան-

<sup>1</sup> Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, Ա. հատ., էջ 216, նա՞և Սիմոն Զաւարեան, Բ. հատ., էջ 58:

<sup>2</sup> Տե՛ս «Դրոշակ», դեկտեմբերի 1, 1895, թիւ 20:

<sup>3</sup> Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, Ա. հատ., էջ 216, նա՞և Սիմոն Զաւարեան, Բ. հատ., էջ 58:

<sup>4</sup> Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, Ա. հատ., էջ 217, նա՞և Սիմոն Զաւարեան, Բ. հատ., էջ 59:

<sup>5</sup> Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, Ա. հատ., էջ 217, նա՞և Սիմոն Զաւարեան, Բ. հատ., էջ 59:

դիսամում 1895 թ. վերջին և 1896 թ. սկզբին նոր մարտական խմբերի կազմավորման և Երկիր անցնելու համար: Այս մասին Կարսի ՀՅԴ կենտրոնական կոմիտեին ուղղված 1895 թ. նոյեմբերի 28-ի թվակիր նամակում Յրայրը գրում է. «Ժողովուրդը տրամադրի չել խմբերին պաշտպանելու, եւ այսօր շատ մը ժողուարութիւնների պատճառաւ անհնար է Երկրի խորքերը անց կենալ: ...Ժողովուրդը չունի ոյժ, չունի կորողութիւն գեր նոր գործերու ձեռնարկելու, միայն ընդունակ է գեր ինքնինքը պաշտպանելու, այն էլ, եթէ ունենայ փոքր ինչ ոյժ...»<sup>1</sup>: Նույն բանը հաստատվում է ՀՅԴ Բասենի գործիչներից մեկի 1896 թ. հունվարի 2-ի թվակիր նամակում. «...Այլեւս խմբեր չեն կարող անցկենալ նախ ճանապարհների խստութեան եւ երկրորդ՝ ժողովուրդի մէջ չպաշտպանուելու պատճառով»<sup>2</sup>: Ուստի Յրայրն առաջարկում է. «Առայժմ թող տալու է խմբերի անցկենալը, միայն ջանալու է ապրանք հասցնել Սարհիղամիշ, ուրկից տեղական երիտասարդների միջոցաւ փոխադրելով՝ տալ ժողովուրդին՝ գեր ամէն մի գիւղում 5-6, որով միայն կարելի է շփում ունենալ ժողովուրդի հետ եւ ոգեւորել նրան դէպի նորանոր ձեռնարկներ»<sup>3</sup>: Յրայրի այս տեսակետն է պաշտպանում նաև ՀՅԴ Բասենի շրջանի վերոհիշյալ գործիչը, որն այդ մասին գրում է. «Իսկապէս, ժողովուրդի վիճակը անտանելի է: Թաթուլն էլ գրում է, որ մի կազմաւորուած ցոյց կարող է մեծ օգուտ տալ, բայց ներկայ պարագաների մէջ շարժումներ առաջացնելու բնաւ համակարծիք չեմ: Աչքի առաջ ունենալով մահմետականների ֆանատիկոսութիւնը, եւրոպայի թոյլ եւ անպիտան քաղաքականութիւնը, ձմեռուայ խստութիւններին այդպիսի մի շարժումը կարող է ժողովուրդին տանել անդառնալի կորուստի: Ներկայ պարագաներում յեղափոխական խմբերը երբէք չեն կարող առանց ժողովուրդի օգնութեան որեւէ գործ կամ ցոյց առաջացնել...»<sup>4</sup>:

Անդրադառնալով 1892-1895 թթ. ընթացքում Կարսի մարզից Երկիր անցած խմբերին ու նրանց նպատակին՝ գալիս ենք հետևյալ եզրահանգումների՝

1. Նշված ժամանակահատվածում Երկիր անցած խմբերի մեծ մասին, որոշ բացառությամբ, հաջողվում է հասնել Երկրի՝ ռազմավարական և այլ առումներով խոշոր նշանակություն ունեցող վայրեր (Սասուն, Ախլաթ, Մուշ, Խնուս, Էրզրում, ...):
2. Խմբերը իրենց հետ Երկիր են փոխադրել որոշ քանակությամբ զենք ու զինամթերք և մարտունակ ուժեր ու գործիչներ:
3. Երկիր անցած խմբերը համիլյան ջարդերի օրերին ակտիվ դերակատարություն են ունեցել արևմտահայության ինքնապաշտպանության կազմակերպման և ղեկավարման գործում, որի շնորհիվ Արևմտյան Յայաստանի որոշ վայրերում (Ախլաթ, Մուշ, Բասեն...) արևմտահայությունը իիմնականում զերծ է մնացել ջարդերից:
4. Կարսի մարզից Երկիր անցած ՀՅԴ գործիչները ձեռնամուխ են եղել Արևմտյան Յայաստանի տարբեր վայրերում ՀՅԴ կոմիտեների ստեղծման գործին, որը կարևոր նշանակություն ուներ հետագայում արևմտահայության ինքնապաշտպանության կազմակերպման և հեղափոխական գաղափարների տարածման համար:

\*\*\*

<sup>1</sup> Դիւան թ. 3. Ղաշնակցութեան, Ա. հատ., էջ 231, նա՞և Ալօ, Յրայր-Դժոխք, էջ 54:

<sup>2</sup> ՀՅ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, Լեռյի անձնական արխիվ, ֆ. 1, գ. 1, գ. 162, թ. 1:

<sup>3</sup> Դիւան թ. 3. Ղաշնակցութեան, Ա. հատ., էջ 231, նա՞և Ալօ, Յրայր-Դժոխք, էջ 54:

<sup>4</sup> ՀՅ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, Լեռյի անձնական արխիվ, ֆ. 1, գ. 1, գ. 162, թ. 1:

## **РЕЗЮМЕ**

**Акопян Карапет, В 1892-1895 ГГ. ВХОД В СТРАНУ ИЗ КАРССКОЙ ОБЛАСТИ ВОЕННЫХ И ВООРУЖЕННЫХ ГРУППИРОВОК И ИХ РОЛЬ В ДЕЛЕ САМОЗАЩИТЫ ЗАПАДНЫХ АРМЯН,** - В 1892-1895 гг. для того чтобы помочь западных армянам, из Карсской области переходят русско-турецкую границу ряд деятелей (Тигран Оконян, Карапелик (Барсег Тер-Григорян), Кери (Аршак Гавафян), карабахцы Аршак, Джаллад (Ерванд Баберян), Турбах (Арутюн Киракосян)) и группы (Арабо (Степанос Мхитарян), Мурат Поячян, Погос хзлагачци, Степан шеникци, Абро (Мкртич Саакян), Ахбюр Сероб (Сероб Варданян), Грайр Джохк (Арменак Газарян), Джаллад, Гнчакян Сев Мелкон и другие), которые в Страну перевозят не только оружие и боеприпасы, и военные силы, а также активно участвуют в деле самозащиты западных армян.

**Կարպատի Հակոբյան**